

15485




ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

« ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ »



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Մ Ա Ր Ս Է Յ Լ

ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Marseille.- Imp. Schickler et Pignatel, r. Vacon, 50

1889

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

« Հ Ա Յ Ո Յ »

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Հայրենակիցներ ,

« Հայոց Հայրենասիրական Միու-  
թիւն » ն ա'լ ժամանակն հասած հա-  
մարեց իւր գոյութիւն յայտարարե-  
լու , այսինքն կազմակերպուած ներ-  
կայանալու :

Թիւրքահայաստանի վիճակը օր ըստ  
օրէ աւելի կը ծանրանայ , հարստա-  
հարութիւնները փոխանակ թեթեւ-  
նալու կը բազմապատկուին , մեր մայր-  
-հայրենիքէ եկած գրութիւնների  
ամեն մէկ տողերէն արտասուքի և ա-  
րիւնի կաթիլներ կը թափթփին և ա-  
մեն ինչ յայտնի կը ցուցնէ թէ Թիւրք  
կառավարութիւնը որոշ մի ծրագրով  
կը զօրծէ այդ ամենը , Հայութիւնը  
յուսահատցունելու և Հայութեան

դ աղափարը ջնջելու համար Հայաստանի մէջ :

Հայրենակիցներ՝ կարելի՞ է ալ անտարբեր մնալ այս սոսկալի տեսարանին առջեւ . երբ մեր հայրենակիցներ՝ որոնք հայրենի հողին կպած մնացած, պահապաններ եղած են մեր նախնիքների մեզ թողած սքրազան յիշատակարաններին և ժառանգութիւններին, կը մարտիրոսանան այնտեղ այդ պահնորդութեան պաշտօնը կատարելու համար, մենք՝ նոցա արինակիցներ, ազատ երկիրների մէջ ապահովուած Հայերս, պէտք է որ տակաւին անզգայ և անտարբեր մնանք :

Մեր ազգութեան, մեր հայրենիքի թշնամին համարձակօրէն կը կատարէ այդ ամենը մեր հայրենի երկրի մէջ որովհետեւ գիմադրութեան ոյժ չը տեսներ իւր առջեւ . որովհետեւ կը տեսնէ թէ խեղճ Հայաստանցիներն անօգնական երեսի վրայ թողուած են,

ո՛չ միայն եւրոպական մեծ պետութիւններէն որոնք Պէրլինի դաշնագրի ճարդ յօդուածին համեմատ պարտաւորութիւն դրած են թիւրք կառավարութեան վրայ որ վարչական բարւոքումներ և վերանորոգումներ մշայունէ Հայաստանի մէջ տեղական պէտքերին համեմատ, այլ և ազատ երկիրների մէջ բնակող Հայ գաղթականութիւններն ալ գործնական մի օգնութիւն չեն հասցուներ Հայաստանի մէջ նահատակուող իրենց եղբայրների :

Մի՞թէ՞ չկան ազատ երկիրների մէջ ապրող Հայ հայրենասէրներ որոնք պատրաստ լինին իրենց ձեռք տալ Հայաստանի մէջ գտնուող հայրենասէրներին . մի՞թէ՞ յերաւի անտարբեր և անզգայ են մայր-հայրենիքէն դուրս գտնուող ամեն Հայերն ալ . մի՞թէ՞ յերաւի բնաւ ոյժ չկայ Հայ ազգին մէջ գիմադրելու համար հեղհետէ ծանրացող հարստահարութիւններին . ո՛չ,

ս'չ. կան բաւական թուով զգայուն  
 Հայեր. կայ և մեր մէջ դիմադրութեան  
 բաւական ոյժ. բայց սիրտերն բաժան,  
 ոյժերն ցրուած են. կապակցութիւն  
 չկայ իրենց մէջ:

Մենք ամենքս առանձին առանձին  
 ցաւ կը յայտնենք որ մեր եղբայրներ  
 կը հարստահարուին Հայաստանի մէջ.  
 մենք ամենքս առանձին առանձին կը  
 բաղձանք մեր հայրենիքի աչափա-  
 թեան, բայց այդ ամեն ինչ կը մնայ  
 առանձնութեան մէջ. պէտք է որ մի-  
 անան միեւնոյն գաղափարի ծառայող  
 հայրենասէրներն որպէս զի արդիւնա-  
 ւորեն իրենց բաղձանքներ: Քանի որ  
 մեր սիրտեր միեւնոյն զգայութեանով  
 կը բաբախեն, մեր բաղձանքներ և հա-  
 մազումներ մի են, ինչո՞ւ մեր ձեռքեր  
 ալ չմիանան մէկտեղ գործելու հա-  
 մար կանոնաւոր կերպով քանի որ ոյժը  
 միութեան մէջ է և մեր թշնամուն  
 յաղթելու գաղանիքը միութեան մէջ  
 պէտք է փնտռել:

«Հայոց Հայրենասիրական Միու-  
 թեան» նպատակն է ամփոփել և կա-  
 պակցել միեւնոյն գաղափարների և  
 համոզման ծառայող հայ հայրենասէր-  
 ներն և միութեամբ յառաջ բերել Հայ  
 ազգին մէջ բարոյական, ֆիզիքական  
 և դրամական ոյժեր, հայրենասիրա-  
 կան նպատակին նուիրուած: Պէտք է  
 բուն իսկ Հայ ժողովրդին մէջ ոյժ գո-  
 յացունել իր ազատութեան համար.  
 առանց ատոր օտարներէ եղած օգնու-  
 թիւնն անօգուտ կը լինի և մինչեւ իսկ  
 կրնայ վնասակար դառնալ: Այո՛, թէև  
 այդպիսի գործունէութիւնը կրնայ մեծ  
 ձայներ հանել մէջը դատարկ կարասի  
 պէս, բայց այդ ձայներ չեն առաջնոր-  
 դեր, չեն հասցուներ մեզ մեր նպա-  
 տակի եթէ մենք մեր մէջ ոյժ չունե-  
 նանք քաղելու և մեր ուղած տեղ  
 երթալու համար. . . :

Ընդարձակ ոյժեր կան Հայ ժողովրդ-  
 դին մէջ. բայց պէտք է որ կապակցին,

միանան այդ ոյժերը: Պատուական հան-  
քեր կան Հայաստանի մէջ որոնք գան-  
ձեր կարժեն. այդ հողի տակ ծած-  
կուած հանքեր այն ժամանակ հողէն  
դուրս կեղնեն, երեւան կուգան երբ  
մեր միութեամբ աշխատութիւնը տես-  
նեն, երբ հողը փորող մեր գործիքներ  
իրենց հասնին: Ընթերցողը կը հաս-  
կընայ անշուշտ որ հողի տակ ծած-  
կուած այդ հանքեր մեր կտրիճ եղ-  
բայրներն են Հայաստանի մէջ որ այսօր  
առանձին, անպաշտպան և աննշան  
վիճակի մէջ լքուած, ածուխի պէս սև  
ու աղտոտ կերեւին մեզ թէեւ ազա-  
մանդի փայլն ու արժէքն ունենան:

Ուժով գործելու և գործողներին  
օգնելու համար պէտք է որ կապակ-  
ցին, միանան, համախմբուին գոնէ այն  
Հայեր որոնք այնպիսի դիրքի մէջ կը  
գտնուին որ ղիւրութիւններ ունին  
միանալու համար: Եթէ 5,000,000  
Հայերի մէջէն գէթ 500 Հայեր, զանա-

զան դասակարգերէ, բոլորովն նուիր-  
ուած լինին հայրենասիրական գաղա-  
փարին, ինչե՞ր չեն կարող անել:

Հայրենիքի փրկութեան համար շատ  
բաներ հարկաւոր կըլինին. հարկ է դը-  
րամ տալ, ժամանակ տալ, արիւն տալ.  
Թո՛ղ ամեն մէկ Հայ ընէ ինչ որ կրնայ,  
բայց թո՛ղ ընէ մի բան, թո՛ղ չմնայ  
անմաս հայրենիքի ազատութեան Ս.  
Գործին աշխատելէ: Այս զգացում, այս  
պարտաճանաչութիւն պէտք է տի-  
րապետէ մեր մէջ: Պէտք է ամեն Հայ  
իւր մէջ սուրբ պարտաւորութիւն զգայ  
պատրաստուիլ մեծ գործին համար:

Ժողովրդի գործը ժողովրդով պիտի  
յառաջ երթայ. մի քանի մարդեր կա-  
րող են միայն սկսիլ որովհետեւ մէկը  
պէտք է որ նախաձեռնութիւն ունե-  
նայ, սկսի, ծայր տայ գործին. բայց  
այդպիսի ընդհանրական գործի շա-  
րունակութեան համար պէտք է որ ա-  
մենքն ալ շարժին, ձեռք տան, միա-

նան և գործեն: Ոչ թէ գանդաղու-  
թեան օրինակ առնելու համար պէտք  
է որ իրար նային, այլ պէտք է  
աչք դարձունեն դէպի գործողները:

« Հայոց Հայրենասիրական Միու-  
թեան » վարչութիւնը կառաջնորդէ,  
բայց ժողովուրդը պէտք է միանայ ա-  
նոր հետ և գործէ. վարչութիւնը ճան-  
բայներ կը բանայ ժողովրդին առջեւ,  
բայց ժողովուրդը պէտք է միանայ,  
կարգ կազմէ և համընթաց յառաջա-  
նայ այդ ճանապարհէ:

Թէ ընդհանրական գործին սկսող-  
ներն մինակ մնան, իրենք կը զոհուին  
և գործը յառաջ չերթար: Անտարա-  
կոյս, թէ յառաջ և թէ վերջը, շատ  
զոհեր պիտի պահանջէ հայրենիքի ա-  
զատութեան մեծ գործը. մանաւանդ  
գործին սկզբնաւորութիւն անողներն,  
թէ գրիչ շարժող և թէ սուր, պիտի  
վտանգուին և հալածուին, նոյն իսկ  
իրենց հայրենակիցներէ, նոյն իսկ ա-  
նոցմէ որոց ազատութեան համար

զոհուիլ յանձն կառնեն և խելքն հաս-  
նողն ու չհասնողը պիտի դատէ և դա-  
տապարտէ զիրենք: Բայց այս ամենը  
գիտնալով հանդերձ, պէտք չէ վհատիլ  
այլ պէտք է աշխատիլ որ սկսող ան-  
հասներն և կամ խուճերն, եթէ զոհ-  
ուին ալ, գէթ արդիւնք ունենան ի-  
րենց զոհողութիւններ:

Այդ արդիւնք ձեռք բերելու համար,  
պէտք է որ միեւնոյն գաղափարի ծա-  
ռայողներն միանան, ամփոփուին մի  
կազմակերպութեան մէջ և բարոյական,  
ֆիզիքական և դրամական փոքրիշատէ  
ոյժ գոյացուցած լինելով, պատրաստ  
գտնուին յարմար առիթներէ օգուտ  
քաղելու:

Ամենքս ալ աշխատինք ուրեմն, հայ  
հայրենակիցներ, « Հայոց Հայրենասի-  
րական Միութեան » կապակցութիւններ  
հաստատել ամեն տեղ հայրենասէր  
հայերին հետ որոնք արդէն սիրտ ունին  
միանալու Ս. Գործին համար. աշխա-  
տինք գաղափարակիցներ պատրաստել

մեղ ամեն կողմեր, որ երբ յարմար ժա-  
մը հնչէ, ամենքը մէկէն մէկ մարդի  
պէս ոտք եննեն և ամեն կողմէ միա-  
բերան մէկ աղաղակ բարձրացունեն:

Մտածեցէք, հայրենակիցներ, որ  
ձեր եղբայրներ ամեն օր կը հարստա-  
հարուն ձեր մայր-հայրենիքի մէջ, կը  
զրկուին իրենց ընտանիքէ, կը զրկուին  
իրենց կեանքէ և իրենց յոյս դրած են  
այժմ իրենց տարարնակ հայ եղբայրնե-  
րի օգնութեանը վրայ. ձեռքերնիդ  
դրէք ձեր սրտի վրայ, ձեր խղճի վրայ և  
այնպէս խորհեցէք թէ պէտք է տակա-  
ւին ձեր այդ ձեռք չտաք միանալու հա-  
մար երբ «Հայոց Հայրենասիրական Մի-  
ութիւն»ն եկած է հրաւեր կարգալ ձեզ:

«Հայոց Հայրենասիրական Միութեան»  
Ընդհանուր Տնօրէն  
Մ. ՓՈՐՏՈՒԿԱԼԵԱՆ

Ծան. «Հայոց Հայրենասիրական Միու-  
թեան» անդամակցիլ կամ թղթակցիլ ու-  
զողներն պէտք է դիմեն հետևեալ հասցէին.

M. PORTOUKALIAN  
(France) Marseille

# ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Հ Ա Յ Ո Յ »

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՅՆԵՐ

«Հայոց Հայրենասիրական Միու-  
թեան» նպատակն է աշխատիլ վարչա-  
կան բարենորոգումներ մտցունելու  
թիւրքահայաստանի մէջ, Հայ ժողովրդի  
տեղական պետքերին համեմատ:  
Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրա-  
ւունք ստանալ ազատօրէն ինքզինք  
կառավարելու որով միայն պիտի կըր-  
նան վերնալ այն հարստահարութիւն-  
ներ որոնք այսօր Հայաստանի թըշ-  
ուառութեան և աւերակ դառնալուն  
պատճառ կը լինին:

«Հայոց Հայրենասիրական Միու-  
թիւն»ը իւր նպատակ իրագործելու  
համար իւր կարողութեան չափով կը  
գործադրէ ամեն յարմար եղած միջոց.

ներն , ժամանակի պահանջներին համեմատ . կաշխատի ներքին ոյժ գոյացունել Ս.զգին մէջ իւր ազատութեան համար , հրատարակութիւններ կանէ , դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին :

Միութիւնը կունենայ իրեն բերան եզոզ լրագիր որ, բացի զանազան լուրեր տալէ իբրեւ լրագիր , կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել , տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ :

### ՎՍՐՁՈՒԹԻՒՆ

1. «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ն ունի մի ընդհանուր Տնօրէն որի անունն պէտք է հրատարակուի : Ընդհանուր Տնօրէնն իւր ուղած անձերէ կընտրէ իրեն Խորհրդական երկու անդամներ և երկու Խորհրդական անդամներ ալ Ընդհանուր ժողովը կուտայ իրեն : Ընդհանուր Տնօրէնն կը բաժնէ անոնց մէջ վարչական պաշտօններն : Քանի որ Ընդհ. Տնօրէնն է պատասխանատու ընդհանրութեան առջև , վարչութեան միւս անդամների անունները հրատարակել անհրաժեշտ հարկ չհամարուիր : Ընկերութեան վարչական ժողովը կը կազմեն այդ 5 անձեր որոնք հարկ չէ որ անպատճառ միեւնոյն քաղաքի մէջ գտնուին . բաւական է որ կարենան կապակցիլ Ընդհ. Տնօրէնին հետ սեւէ միջոցով խորհրդակցելու և գործակցելու համար :

2. Վարչութիւնը տարին մի անգամ իւր տեղեկագիր ներկայացունելով

Ընդհ. ժողովին, կը հրաժարին Վարչութեան անդամներն, բացի Ընդհ. Տնօրէնէն որի պաշտօնն կը տեւէ 7 տարի: Հրաժարեալներն կրնան վերընարելի լինել: Ընդհ. Տնօրէնը եօթմեայ պայմանաժամէն առաջ ինք կամովին կրնայ հրաժարիլ և կամ կըրնայ պարտաւորիլ հրաժարելու, ձայնատու անդամների  $\frac{3}{4}$ ի քուէովը:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

3. Միութիւնը տարին մի անգամ Ընդհ. ժողով կունենայ Միութեան ելեւմուտքը քննելու, Միութեան վիճակին վրայ տեղեկութիւններ ստանալու և ըստ այնմ հարկ համարուած ձեռնարկներն գործադրութեան առաջարկելու, ձայնատու նոր անդամներ ընդունելու և կանոնադրութեան մէջ հարկ տեսնուած բարեփոխութիւնները մտցունելու համար:

4. Միութեան Ընդհանուր ժողովին կը մասնակցին միայն ձայնատու անդամներն, օրակարգի խնդիրներին

վրայ իրենց տեսութիւններ զրկելով Ընդհ. ժողովին և կամ անձամբ ներկայ գտնուելով ու վիճաբանութեան և քուէարկութեան մասնակցելով:

**ԸՆԿԵՐՄԱՅՈՒԹԻՒՆ**

5. Ամեն Հայ կրնայ ընդունուիլ անգամ «Հայոց Հայրենասիրական Միութեան», առանց խտրութեան կրօնի, սեռի և երկրի, բաւական է որ ինք յարգէ Միութեան կանոնադրութիւնը:

6. Միութեան անդամներն իրենց անդամակցական վճարքի մասին կը բաժնուին 3 կարգի. Ա. Բաշախերոզ անդամներ որոնք տարեկան 50 ֆր. անգամավճար կուտան Միութեան. Բ. Գործօն անդամներ որոնք տարեկան 20 ֆր. անգամավճար կուտան և Գ. Նուիրաւուներ որոնք 20 ֆր. էն պակաս իրենց որոշած ոեւէ քանակութեամբ մի գումար կը վճարեն ընկերութեան, տարեկան կամ ամսէ ամիս և կամ իրենց յարմար տեսած կերպով:

7. Միութեան ոեւէ կարգի անդամ:

36738

58451

97:811  
 715.570.12

ներն իրենց անդամ գրուած ատեն 5  
 Քր. մուտքի տուրք կը վճարեն կան-  
 խաւ : Իսկ տարեկան անդամավճարը  
 (50 Քր. կամ 20 Քր. և կամ աւելի պա-  
 կաս) կարող են կամ մէկ անգամէն  
 վճարել կանխիկ և կամ պարբերապէս  
 մաս առ մաս վճարել իրենց դիւրու-  
 թեան համեմատ : Մէկը իր մուտքի  
 տուրքը գանձուելէ յետոյ Միութեան  
 անդամ կը ճանչուի :

8. Եթէ մի անդամ մէկ տարի շա-  
 րունակ բնաւ տուրք չէ վճարած ա-  
 ռանց բանաւոր պատճառի և տարուն  
 վերջն ալ չվատահացուներ վճարել ,  
 Ընդհ. Ժողովին կը յանձնուի մի անօրի-  
 նութիւն անել անոր մասին և , եթէ  
 հարկ համարուի , զրկել անդամակցու-  
 թենէ :

9. Հրաժարած կամ հրաժարուած  
 անդամներէն ոչ մէկը իրաւունք չու-  
 նի բնաւ յետ ուղել իր տուածները :

10. Հայրենասիրական Միութեան  
 անդամ լինիլ ուզողներն իրենց անուն ,

մականուն և այլն կիմացունեն Ընդհ.  
 Տնօրէնին որ անոնց անդամ լինելէն  
 յետոյ իրենց կուտայ մի թուանշան  
 և այնուհետև , եթէ ուզեն , կա-  
 րող են իրենց թղթակցութիւններ ա-  
 նել առանց իրենց անուն ստորագրելու ,  
 այլ դնելով միայն իրենց թուանշան  
 կամ իրենց որոշած մէկ նոր անուն :

11. Չայնատու անդամներն կընա-  
 րուին Քաջալերող և Գործօն անդամ-  
 ներէն : Տարեկան Ընդհ. Ժողովին մէջ  
 Ընդհ. Տնօրէնը կառաջարկէ ձայնա-  
 տու անդամ անել այն ընկերներ որոնք  
 Միութեան յառաջդիմութեանն հա-  
 մար իրենց ունեցած օգտակար գոր-  
 ծունէութեան պատճառով ինք յար-  
 մար կը տեսնէ և անոնց ալ հաւանու-  
 թիւնն առած կը լինի ձայնատու ան-  
 դամ լինելու : Նոյնպէս ուրէ ձայնա-  
 տու անդամ իրաւունք ունի Ընդհ.  
 Ժողովին առաջարկել իւր ծանօթ մի  
 ընկերն ձայնատու անդամ ընդունելու

համար : Այդ առաջարկ գրութեամբ ալ կարող է անել Ընդհ. ժողովին երբ ինք առաջարկող անդամը անձամբ ներկայ չէ գտնուած : Չայնատու անդամի ընդունուելը կը վճռուի եթէ Ընդհ. ժողովին ներկայ գտնուած անդամների 3/4 մասը քուէ տան ընդունելու :

12. Միութիւնը Ընդհ. ժողովի ուրոշումովն իրեն Պատուոյ անդամ կանուանէ այն անձեր որոնք նիւթական մի նշանաւոր նպաստ (առ նուազն 500 Ֆր. միանուագ) նուիրած են Միութեան և կամ բարոյական մի մեծ ծառայութիւն մատուցած են Միութեան նպատակին : Պատուոյ անդամներին վկայագիր կը զրկուի Միութեան կողմէն : Պատուոյ անդամներն կրնան Միութեան անդամ չգրուածներէ ալ լինել :

13. Միութեան բերանն եղող լրագրին բաժնորդագրութիւնը պարտաւորիչ է Միութեան բոլոր անդամներին

համար : Բացառութիւն կրնայ լինիլ միայն տեղական ինչ ինչ պատճառներով որոնք արդարացի կը գտնէ Վարչութիւնը :

14. Միութեան ամեն անգամ պարտաւոր է կարելի եղածին չափ աշխատիլ Միութեան օգտին իւր շրջանի մէջ , տարածել նորա գաղափարներ և նպատակներ գտնել , աշխատիլ , որչափ որ իւր ժամանակ և հանգամանքներն կը ներեն , տեղեկանալու իւր ազգի պատմութեան և Հայաստանի աշխարհագրութեան , հետաքրքիր լինել և իմանալ թէ ինչ հարստահարութիւններ կը լինին Թիւրքահայաստանի մէջ և թէ ինչպիսի միջոցներ ձեռք կառնուին Հայերն ճնշելու , ջնջելու և հաղորդել ատոնք Միութեան Ընդհ. Տնօրէնին հրատարակուելու կամ լի տեղեկացնելու համար :

15. Միութեան ուրէ անդամ կարող է Միութեան յառաջդիմութեան հա-

մար իւր խորհուրդներ զրկել Ընդհ. Տնօրէնին, իւր յարմար տեսած ժամանակ :

16. «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը պատրաստ է իւր ձեռք տալ Հայ ազգային ընկերութիւններին ուրոնք կուզեն իրեն աջակցել նիւթապէս և բարոյապէս, այս ինչ կամ այն ինչ միջոցով, պահպանելով հանդերձ իրենց առանձին անկախ գոյութիւն : Այդպիսի ընկերութիւններն իրենց անելիք օգնութիւններ յայանելով յարաբերութեան կը մտնեն Ընդհանուր Տնօրէնին հետ :

**ՕթեՍԿներ**

17. Եթէ մի տեղ Միութեան մի քանի անդամներ գտնուին, կրնան, եթէ ուզեն, իրար հետ միանալով «Հայրենասիրական Միութեան» մի օթեակ կազմել, իրենց աշխատութիւններ միասին յառաջ տանելով դիւրացունելու համար : Օթեակի անդամներն իրենց

յարմար տեսած ժամանակներ կը հաւաքուին հայրենասիրական գիրքեր կարդալու և իրար լուսաւորելու համար, ինչպէս նաեւ Միութեան գաղափարներն տարածելու և Միութեան հասոյթներն աւելցնելու վրայ միասին խորհրդակցելու և աշխատելու համար : Միութեան անդամներն պարտաւոր են իբր Հայ եղբայրներ իրար օգնել և իրար պաշտպանել կարելի եղածին չափ :

18. Օթեակներն սոյն կանոնագրի սկզբունքներին վրայ հիմնուելով իրենց յատուկ մի կանոնագրութիւն կը շինեն իրենց տեղական յարմարութիւնների համեմատ և կը զրկեն Միութեան Ընդհ. Տնօրէնին վաւերացուելու համար : Ընդհանուր Տնօրէնը հետզհետէ կը զրկէ Միութեան օթեակներին իւր հարկ համարած հրահանգներն :

19. Օթեակների տեղական ծախքերն կը հօգացուին իրենց շրջանակի մէջ ա-

տոր համար յատկապէս հաւաքուած  
տուրքերով :

ԳԱՆՁԱՅԻՆ ՎԻՃԱԿ

20. Միութեան եկամուտներն են  
անդամական վճարքներն , հրատարա-  
կութիւններէ և ծախուած գիրքերէ  
գոյացած շահն և ամեն տեսակ նուի-  
րատուութիւններ ( դրամ , արժէ-  
թուղթ , գիրք , զանազան իրեղէններ  
և կամ կալուածներ ) որոնք կը զրկուին  
կամ կտակ կը լինին Միութեան , զայն  
զօրացնելու և նպատակին հասցունելու  
համար : Նուիրատուութիւններն կը հը-  
րատարակուին Միութեան բերան եղող  
լրագրին մէջ , եթէ նուիրատուն ար-  
գելք չդնէր : Եթէ նուիրատուն ուզէ ,  
իւր սրոջած կեղծ անունով կը հրա-  
տարակուի նուիրատուութիւնն :

21. Միութեան Վարչութիւնը պար-  
տաւոր է գանձուած բոլոր հասոյթներ  
րի 1/6ին 25ը պետական մի դրամատան  
տակոսի տալով պահել որի մէկ մասը  
կրնայ նաեւ վերածուիլ տոկոսաբեր

ապահովուած արժէթղթերի : Թէ երբ  
և ինչպէս պէտք է գործածուի պա-  
հեստի դրամը , յարմար ժամանակին  
կորոյէ Ընդհ. ժողովը իւր անդամների  
3/4 մասի քուէով : Մնացած 1/6էն 75ը  
միայն կրնայ ծախուել Միութիւնը իւր  
բերան եղող լրագրի յառաջդիմու-  
թեանն ու զօրանալուն , գիրքեր տա-  
րածելու , ճանապարհորդութիւններ  
անելու , ընկերութեան նպատակի աշ-  
խատողներին օգնութիւններ հասցու-  
նելու և վերջապէս հարկ համարուած-  
ներն գործադրելու համար :

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ

22. Միութեան ժողովներին , դի-  
ւաններին և այլ ներքին գործերի հա-  
մար մասնաւոր կանոններ կը սահման-  
ուին :

23. Միութեան կազմաւորիչ այս  
կանոնագրի մէջ կրնայ տարեգլխին  
Ընդհանուր ժողովը բարեփոխութիւն-  
ներ մտցունել , իւր անդամների 3/4ի  
ձայնին համեմատ :

# ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ  
ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՋԱՏՈՒԹԵԱՆ

« Հայրենասիրական Միութեան »  
հրատարակած այս վարդապետարանի  
մէջ համառօտ կերպով բացատրուած  
է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ  
ինչ իղձեր պէտք է ունենայ և ինչ  
պարտքեր ունի կատարելու :

Գինն է 20 սանթիմ և կը ծախուի  
Արմենիայի խմբագրատունը : Մէկ ան-  
գամէն 20 օրինակ գնողը կը վճարէ 3  
ֆրանգ և 50 սանթիմ միայն , փո-  
խանակ 4 ֆրանգի : Փոստի ծախքը  
կը վճարուի « Հայրենասիրական Միու-  
թեան » կողմէն :

Հետեւեալ գիրքերն կարելի է ստանալ Արմէնիաի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով :

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չգրկուիր :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՅ ԳԻՒՅԱԶՆՈՒՀԻ ՄԸ (սպառած) :

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՅԻ (սպառած) :

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի ժողովանքներն և մտածումներն են Սաղմոսի ոճով գրուած) . 40 սնթմ. :

Դ. ԱԶՍՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՅ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՅ (Պուլղար աղբին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ դարէ ի վեր արած ջանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է) :

1 ֆր. 50 սնթմ. :

Ե. ՀԱՅՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԸ . —

(Հայաստանցիների թշուառութեան դիւխաւոր ազդեւորներէն մին ելող պանդխտութեան դառն հետեւանքներէ մի քանին նկարագրուած են իրական կեանքէ առնուած այս փոքրիկ վէպի մէջ) :

1 ֆր. 20 սնթմ. :

Զ. ԳՍՄԱՌԻ ՔԱԹՈՒՊՍ.—ԺՈՂՈՎՐԴՅԱՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ յետ այբուբենն աւարտելուն . (Մեծանուն Հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն Յը՝ որոնք իւր «Բանաստեղծութիւններ») ի հաւաքածոյին մէջ չեն գտնուիր, առանձինն տեւրակով հրատարակուած են) : Այս տետրակէ որի շահը բարեգործական մի նպատակի յատկացած է, 50 հատը մէկ անգամէն գնողին կը տրուի 50 հատը 2 ֆրանգ 50 սանթիմի, որ ըսել է հատը 5 սանթիմ կամ 10 փոքր թրքական :

Է. ԼԻՆՉԻ ՕՐԷՆԻԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— (Այս տետրակի մէջ ցոյց կը տրուի թէ բռնաւորները և ազգամասնիչ Հայերի դատաստանը Խնչպէս պէտք է տեսնուի այնպիսի երկիրները մէջ ուր օրինաւոր և արդարագատ կառավարութիւն չկայ :)

Մէկ օրինակի գինն է 20 սանթիմ.  
20 օրինակը 3 ֆրանգ և 50 սանթիմ :

—ԲաճՅի— ԿԱՅՄԵՐ Ա. Ե. Բ. Հատորներ.  
(Ազգային առաջնակարգ վիպագիր Բաֆֆիի այս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի զանազան ցեղերի և հայերի դրութեան, վարքի և բարքի մասին : Նա ցոյց կը տայ այն ծրագիր որին պէտք է հե-

տելին Հայաստանի մէջ գործել ուղղներն : Մի խօսքով, թէ՛ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տուն :)

Գին Ա. Հատորին (կաղմած) 8 ֆր. և 50 սանթիմ. Բ Հատորին (թղթակաղմ) 8 ֆրանգ և 50 սանթիմ :

—ԲաճՅի.— ՍԱՄՈՒԷԼ (Բաֆֆիի հրատարակած ազգային վէպերի վերջինն է այդ որի նիւթը առնուած է Ե դարի Հայերի կեանքէն և որ, բացի իւր ներշնչած ազատասիրական ըզգացումներէ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ այն ժամանակի Հայերի բարքերին, սովորութիւններին և այլնի վրայ :)

10 ֆր.

—Մերեց.— ԵՐԿՈՒՆՔ Թ. ԴԱՐՈՒ  
(Ազգային անուանի վիպասան Մերենցի գրած այս գիրք ցոյց կուտայ թէ

մահմտականներն թ գարին մէջ Հա-  
յաստան արշաւելով ինչ բարբարոսու-  
թիւններ կը գործէին այնտեղ, ինչ-  
պէս և կը գործեն այժմ նոյն իսկ ժԹ  
գարին մէջ: ԵՐԿՈՒՆՔԸ իբրեւ օրի-  
նակ ցոյց կուտայ ազգային գործիչ-  
ներին Սասունցի Յովնան անուն մէկը  
որ ի զուր բարձր տեղերէ ազգային  
փրկութեան ակնկալելէ յետոյ, վեր-  
ջապէս ժողովրդին մէջ կը վնասէ ա-  
զատութեան ոյժը և անով կը յաջողի  
մի քանի յաղթութիւններ տանել  
թշնամիներին դէմ) 3 ֆր. և 50 սնթմ.

— Գամառ. Քաթիպա. — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ-  
ԹԻՒՆՆԵՐ. (Ս. զգային առաջնակարգ  
բանաստեղծ Ռ. Պատկանեանցի ազա-  
տաշունչ և հրահանգիչ բանաստեղ-  
ծութիւններն կը պարունակէ. սկիզբն  
գրուած է հեղինակին պատկերը):

2 ֆրգ:

ԳԵՏԱԿԱՆ

ԵՏԵՂԱԿԱՆ

ՄՄ Հայագիտական գրադարան



MAL015730

